Ա/բ-0391 Հայ և համաշխարհային կերպարվեստի պատմություն IV- 4 կրեդիտ Դասախոսություն - 26ժամ, գործնական 24ժամ, (շաբաթական 2ժամ)

4-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Ուսանողներին ծանոթացնել արվեստի պատմության զարգացման փուլերին՝ խթանելով նրանց անալիտիկ մտածողության զարգացումը:

Կրթական արդյունքներ.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը. պետք է

- յուրացնի արվեստի պատմության անցած ուղու փուլերը,
- ձեռք բերած գիտելիքները ի սպաս կդնի արվեստի բովանդակային ճանաչողությանը:

Բովանդակությունը.

Թեմա 1. Հայ արվեստը միջնադարում 4-8-րդ դդ.: ***Թեմա 2.*** Հայկական արվեստի վերելքը: ***Թեմա 3.*** Հայկական միջնադարյան մանրանկարչությունը: ***Թեմա 4.*** Հայկական արվեստը 17-րդ դ. կեսին: ***Թեմա 5.*** Հայկական արվեստը 19-րդ դարում: ***Թեմա 6.*** 19-20-րդ դ.դ. հայկական արվեստը: ***Թեմա 7.*** Սփյուռքահայ արվեստ: ***Թեմա 8.*** Ժամանակակից հայ կերպարվեստի զարգացման միտումները: ***Թեմա 9.*** Հայ մշակույթի համաշխարհային նշանակությունը:

ԻՏՄՄ/բ-0663 Համակարգչային գրաֆիկա-3 կրեդիտ Դասախոսություն 20ժամ, գործնական 28 ժամ, (շաբաթական 3ժամ) 6-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Ուսանողների մոտ ձևավորել ընդհանուր պատկերացում համակարգչային գրաֆիկական խմբագրիչների, նրանց հնարավորությունների և կիրառման մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը պետք է.

- տիրապետի գրաֆիկական խմբագրիչները օգտվելու հիմնական սկաբունքներին
- կարողանա ստեղծել գրաֆիկական ֆայլեր, դրանք խմբագրել, կատարել ստեղծագործական աշխատանք՝ կիրառելով գրաֆիկական խմբագրիչի

գործիքներն ու հրամանները:

Բովանդակությունը.

Թեմա 1. Վեկտորային և կետային գրաֆիկական խմբագրիչներ: Հիմնական հասկացություններ: ***Թեմա 2.*** Կտավի և նկարի պարամետրերի ընտրություն: Ֆայլեր: ***Թեմա 3.*** Գունալցում, երանգավորում: Պատկերների տեղամասի ընտրություն: ***Թեմա 4.*** Շերտեր, կանալներ: ***Թեմա 5.*** Կեքստերի ներդնում, խմբագրում: Շրջանակ: ***Թեմա 6.*** Ֆիլտրավորում:

Ա/բ- 0414Գործվածքի դիզայն 3 կրեդիտ, գործնական - 48ժամ, (շաբաթական 3 ժամ)

3-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Հիմնական նպատակն է ուսանողների մոտ գործվածքագիտության, որպես սոցիալական և գեղարվեստական երևույթի, վերաբերյալ պատկերացումների ձևավորումն ու հիմնավորումը և նրանց ծավալային – տարածական մտածողության զարգացումը: «Գործվածքի դիզայն» ծրագրի յուրացման արդյունքում ուսանողները պետք է գիտակցաբար մոտենան գործվածքների գեղազարդման գործընթացի լուրջ փուլերին, նկատի ունենալով որ այդ գործընթացը որոշակի սոցիալական խնդիր է լուծելու, այն է՝ մավարարել մարդու համապատասխան պահանջմունքները:

Կրթական արդյունքներ.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է.

- իմանա «Գործվածքի դիզայն» առարկայի նպատակն ու խնդիրները, կապը այլ գիտությունների հետ
- կիրառի դեկորատիվ նկարչության սկզբունքները
- իրականացնի նյութով նախագծումներ
- ձևավորել թեմատիկ և ստեղծագործական էսքիզների կատարման հմտություններ,
- տիրապետի նյութով նախագծումների իրականացման տեխնիկային

Բովանդակությունը.

Թեմա 1. «Գործվածքի դիզայն»առարկայի նպատակն ու խնդիրները: ***Թեմա 2***

Ձարդանախշերի դասակարգումը և սխեմատիկ հատկանիշները կիրառական արվեստի համակարգում: ***Թեմա 3.*** Երկրաչափական մոտիվներով զարդանախշեր: ***Թեմա 4***Բուսական մոտիվներով զարդանախշեր: ***Թեմա 5.***Կենդանական մոտիվներով զարդանախշեր: ***Թեմա 6*** Հայկական կարպետագործության մեջ կիրառվող դեկորատիվ զարդանախշի ընդօրինակում: Նյութի ուսումնասիրություն: ***Թեմա 7***Ձարդանախշի ինքնուրույն ստեղծումը՝ լուսական, երկրաչափական, կենդանական մոտիվներով: ***Թեմա 8.*** Հորինվածքի առանձնահատկությունները: Հորինվածքը գործվածքագիտության մեջ: ***Թեմա 9.***Հորինվածք. Սիմետրիա, ասիմետրիա: ***Թեմա 10***Ստեղծագործական էսքիզների կատարում:Ընտրված էսքիզը մասշտաբով մեծացնել և գունավորել:

Ա/բ- .0414 Գործվածքի դիզայն 2 կրեդիտ

- **գործնական - 32ժամ, (շաբաթական 2 ժամ)**
4-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Ուսումնական գործընթացի նպատակն է նպաստել ուսանողների ստեղծագործական երևակայության արդյունավետ զարգացմանը, այդ թվում նաև՝ նրանց դիզայներական մտածողության առաջընթացին: Ինչպես նաև ձևավորել և զարգացնել ուսանողների գեղագիտական ճաշակը և ստեղծագործական ընդունակությունները:

Կրթական արդյունքներ.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է.

- իմանա և կիրառի գեղարվեստական գործվածքների տեխնիկաների բազմազանությանը
- տիրապետի թեմատիկ և ստեղծագործական էսքիզների հմտություններին
- իրականացնի նյութով նախագծումներ
- ստեղծի հեղինակային ինքնատիպ նմուշներ:

Բովանդակությունը.

Թեմա 1. Հայկական գորգի և կարպետի զարդանախշերի կառուցման սկզբունքները, տեսակները _____ ***Թեմա 2*** _____ Գորգի, կարպետի կամ գորբելենի հորինվածքի առանձնահատկությունները: Հայկական գորգը համաշխարհային մշակույթի համակարգում ***Թեմա 3.*** Հայկական կարպետագործության մեջ կիրառվող դեկորատիվ զարդանախշի ընդօրինակում: Նյութի ուսումնասիրություն ***Թեմա 4***Նդիհանուր հասկացություն կարպետագործության նյութերի մասին: _____ ***Թեմա 5.*** Շրջանակի պատրաստում (100X80), հենքի ամրացում: Նյութով աշխատելու նախապատրաստում: ***Թեմա 6*** Ծանոթություն կարպետի տեխնիկայի հետ:(Հենք: Շղթա գործելու տարբերակներ: Միջնաթելի անցումը հենքի միջով: Միջնաթելի անցումը առաջ – հետ:) ***Թեմա 7.*** Ավարտական աշխատանքներ: Կտրված հենքի թելերի կապումը:

Ա/բ 0416 Հայ և համաշխարհային ճարտարապետության պատմություն 2

կրեդիտ, դասախոսություն – 12 ,գործնական - 32, (շաբաթական 2ժամ)

8-րդ կիսամյակ, ստուգարք
Նպատակը.

Ճարտարապետության պատմության ուսումնասիրությունը մենք սկսում ենք ժամանակագրական և տեղանքային բաժանումով: Սկսելով հայկական լեռնաշխարհի ճարտարապետության զարգացման ուսումնասիրությունից՝ մենք այն դիտում ենք միևնույն ժամանակաշրջանի համաշխարհային ճարտարապետության պատմության կոնտեքստում, միևնույն ժամանակ համեմատություններ տանելով և մատնանշելով ինչպես ճարտարապետական ազդեցությունները, այնպես էլ տեղային առանձնահատկությունները, ինչպիսիք

հատուկ են միայն տվյալ քաղաքակրթությանը: Հայ ճարտարապետության ուսումնասիրությունը սկսելով միջնադարից հասնում ենք մինչև 20-րդ դարի Հայաստանի ճարտարապետական կարևորագույն հուշարձանների ուսումնասիրության պատմությանը, այսպիսով ուսանողին բավարար պատկերացում տալով հայ արվեստի և ճարտարապետության զարգացման ընթացքի վերաբերյալ:

Կրթական արդյունքներ.

- Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է.
- Իմանա ճարտարապետության պատմություն առարկան, նպատակը, խնդիրները:
- Առարկայի տեղը արվեստաբանական գիտությունների համակարգում, առարկայի ինտեգրատիվ մնույթը:
- Կարողանա ճարտարապետության պատմությունը ներկայացնել մշակութային միջոցառումների, բանավեճերի ընթացքում:
- Կարողանա տարբերակել ճարտարապետական ոճական առանձնահատկությունները:

Բովանդակությունը.

Թեմա 1 ճարտարապետության սկզբնավորումը հայկական լեռնաշխարհում **Թեմա 2** Ռեարտուի ճարտարապետությունը **Թեմա 3** Հելլենիստական Հայաստանի ճարտարապետությունը /մթա 3-րդ-մթ 3-րդ դդ/: **Թեմա 4** Հայաստանի վաղ միջնադարի ճարտարապետությունը **Թեմա 5** Հայաստանի ճարտարապետությունը /13-15-րդ դդ/ **Թեմա 6** Հայաստանի 20-րդ դարի առաջին կեսի ճարտարապետությունը **Թեմա 7** Հայաստանի 20-րդ դարի երկրորդ կեսի ճարտարապետությունը **Թեմա 8** Հին աշխարհի ճարտարապետության պատմությունը. Եգիպտոս, Շումեր, Բաբելոն, Ասորեստան: **Թեմա 9** Անտիկ ժամանակաշրջանի ճարտարապետական առանձնահատկությունները և տաճարային տիպերը: **Թեմա 10** Անտիկ ժամանակաշրջանի ճարտարապետական առանձնահատկությունները և տաճարային տիպերը: **Թեմա 11** Միջնադարյան ճարտարապետությունը, Քրիստոնեության ընդունումը և ազդեցությունը ճարտարապետության զարգացման վրա. Բյուզանդիա: Արևմտյան Եվրոպայի միջնադարյան արվեստը **Թեմա 12** Ռոմանական արվեստում ճարտարապետության առաջատար դերը: **Թեմա 13** Գոթական ճարտարապետության ձևավորումը և զարգացումը Ֆրանսիայում, Գերմանիայում և Անգլիայում:

Ա/բ- 0415.Գործվածքի դիզայնի դասավանդման մեթոդիկա 3 կրեդիտ.

դասախոսություն -20 , սեմինար -28 (շաբաթական 2 ժամ)

3-րդ կիսամյակ, ստուգաբք Նպատակը.

- Օգնել երիտասարդ սերնդին ճանաչելու շրջապատը աշխարհը, զարգացնել տեսածը ճիշտ ընթացքում նրանց դիտողական ունակություններ:
- Բացահայտել մանածագործական արվեստի գործնական նշանակությունը մարդու կյանքում:
- Սովորողներին տալ այդ արվեստի տեսակի հիմքերի իմացությունը: Ծանոթացնել հիմնական տեխնիկական աշխատանքային ձևերին:
- Ուսանողներին ծանոթացնել հայկական և համաշխարհային մանածագործական արվեստի հռչակավոր ստեղծագործությունների հետ:

- Բացահայտել գեղարվեստական գործվածքների դերն ու նշանակությունը համաշխարհային մշակույթում:
- Տարբեր ազգերի գեղարվեստական գործվածքների պատմական փուլերը
- Գեղարվեստական գործվածքների հիմնական ձևերը, ոճերը և ուղղությունները

Ուսումնական գործընթացը նպաստում է ուսանողների ստեղծագործական երևակայության արդյունավետ զարգացմանը:

Կրթական արդյունքներ.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է.

- Տիրապետի գործվածքների գեղարվեստական ձևավորման հորինվածքի հիմունքներին
- Իմանա գեղարվեստական գործվածքների տեխնիկաների յազմագանության մասին
- Տիրապետի գեղարվեստական մանածագործության հորինվածքի հիմունքներին
- Իմանա հայ և համաշխարհային գորգագործության ու կարպետագործության առանձնահատկությունների ու տարբերությունների մասին:
- Իմանա զարդանախշի տեսակներն ու կառուցման սկզբունքները

Բովանդակությունը.

Թեմա 1 «Գործվածքի դիզայնի դասավանդման մեթոդիկա» առարկան նպատակն ու խնդիրները: **Թեմա 2** Պատմական տվյալներ կարպետի մասին: **Թեմա 3.** Հայկական կարպետ: Կարպետային գործվածքներ: **Թեմա 4.** Հայկական գորգի և կարպետի զարդանախշերի կառուցման սկզբունքները, տեսակները և իմաստաբանությունը: **Թեմա 5.** Եվրոպական և արևելյան գորգերի առանձնահատկությունները: **Թեմա 6** Հայկական կարպետի և գորգի դերն ու նշանակությունը համաշխարհային մշակույթում: **Թեմա 7** Ժամանակակից հայկական գեղարվեստական գործվածքների զարգացման փուլերը **Թեմա 8** Գեղարվեստական գործվածքների զարգացման փուլերը: **Թեմա 9** Հորինվածք, համաչափություններ, համամասնություններ, մասշտաբ, ռիթմ, չափ: **Թեմա 10** Զարդանախշի տեսակներն ու կառուցման սկզբունքները:

Կամրնտրական դասընթացներ մասնագիտական

Ա/բ-0417 Կավագործություն 4 կրեդիտ, դասախոսություն -12, գործնական -30

(շաբաթական 2 ժամ)

7-րդ կիսամյակ, ստուգարք Նպատակը.

Առարկայի հիմնական նպատակն ձևավորել ուսանողների գեղագիտական ճաշակը, դաստիարակել սեր և հետաքրքրասիրություն կավագործական մշակույթի հանդեպ, ծանոթացնել հայկական ավանդական և ժամանակակից կավագործությանը:

Կրթական արդյունքներ.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է.

- Վերլուծել և գնահատել կավագործության տեսական մեթոդաբանական հիմունքները:
- Զափագրել և նախագծել պատրաստվող ապագա իրը:

- Զուգակցել ժողովրդական կիրառական արվեստի ավանդույթները ժամանակակից տեխնոլոգիաների հետ:
- Տիրապետի պլաստիկ մասսայի պատրաստման, բրուտագործական հաստոցի օգտագործման, խազային նախշազարդման, չորացման, թրծման, ջնարակապատման եղանակներին:
Բովանդակությունը.

Թեմա 1 Հայ ազգային կավագործության ծագումը : **Թեմա 2** Կավի հիմնական հատկանիշները: **Թեմա 3** Պլաստիկ մասսայի պատրաստումը: **Թեմա 4** Հումքի տեսակները, թրծման աստիճանները: **Թեմա 5** Զնարակների օգտագործման եղանակները: **Թեմա 6** Կավագործական նմուշների պատրաստման եղանակները: **Թեմա 7** Հայկական ավանդական և ժամանակակից կավագործության ուսումնասիրությունը: **Թեմա 8** Ծանոթացում հայկական աղամանների, նրանց օգտագործման առանձնահատկությունների հետ: **Թեմա 9** Հայկական աղամանների տեսակները, դերը և նշանակությունը դեկորատիվ – կիրառական արվեստում **Թեմա 10** Հայկական աղամանի ինքնուրույն պատրաստում: **Թեմա 11** Առաջադրանքի վերջնական մշակում, չորացում և թրծում : **Թեմա 12** Քուսական, կենդանական, երկրաչափական զարդանախշի առկայությամբ կավագործական նմուշների ուսումնասիրություն և պատրաստում: **Թեմա 13** Դեկորատիվ ծաղկամանի պատրաստում **Թեմա 14** Էսքիզների նախագծում և դիտարկում: **Թեմա 15** Նմուշի պատրաստում ձեռքով: **Թեմա 16** Զարդանախշի իրականացում քանդակային կամ գրաֆիկական եղանակով: **Թեմա 17** Առաջադրանքի վերջնական մշակում, չորացում և թրծում :

Ա/բ-0418 .Խեցեգործություն 4 կրեդիտ, դասախոսություն -12, գործնական -30

(շաբաթական 2 ժամ)

**7-րդ կիսամյակ, ստուգարք
Նպատակը.**

Առարկայի հիմնական նպատակն է ծանոթացնել ուսանողներին խեցեգործությանը որպես դեկորատիվ-կիրառական արվեստների մի ճյուղի, մշակութային մի երևույթի անհրաժեշտ գիտելիքներին և հմտություններին, խեցեգործական իրերի պատրաստման ասպարեզում:

Ուսումնական գործընթացը նպաստում է ուսանողների ստեղծագործական երևակայության արդյունավետ զարգացմանը, այդ թվում նաև նրանց գեղարվեստական մտածողության առաջընթացին:

Կրթական արդյունքներ.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է.

- Ձեռք բերի տեսական գիտելիքներ և գործնական հմտություններ խեցեգործություն առարկայի վերաբերյալ
- Իմանա խեցեգործության պատմությունը, նրա ծագումը, զարգացումը և առանձնահատկությունները:
- Իմանա պատմական Հայաստանի խեցեգործական իրերի կիրառման և նշանակության մասին
- Իմանա խեցեգործության մեջ օգտագործվող նյութերի ֆիզիկական և քիմիական հատկությունները
- Վերլուծել և գնահատել խեցեգործության տեսական մեթոդաբանական հիմունքներ:

- Կտիրապետեն պլաստիկ մասսայի պատրաստման, բրուտագործական հաստոցի օգտագործման, խազային նախշագարդման, չորացման, թծման, ջնարակապատման եղանակներին:

Բովանդակությունը.

Թեմա 1 Ընդհանուր հասկացություն խեցեգործության մասին **Թեմա 2** Պատմական ակնարկ խեցեգործության ծագման և զարգացման մասին: **Թեմա 3** Ծանոթություն պատմական Հայաստանի խեցեգործական իրերի կիրառմանը և նշանակությանը ; **Թեմա 4** Նկարչական ունակությունների զարգացումը : / պարզ էսքիզներից դեպի բարդացում/ **Թեմա 5** Խեցեգործական իրերի ձևը, ծավալը և նախշագարդերի էսքիզների կատարումը, գրաֆիկական և գեղանկարչական արտահայտչամիջոցներով ; **Թեմա 6** Խեցեգործության մեջ օգտագործվող նյութերի ֆիզիկական և քիմիական հատկությունները (Կավի հիմնական հատկանիշները : Պլաստիկ մասսայի պատրաստումը: Հումքի տեսակները, թծման ջերմաստիճանները) : **Թեմա 7** Խեցեգործության նմուշների պատրաստման եղանակները **Թեմա 8** Բրուտագործական հաստոցով աշխատելու առանձնահատկությունները և անվտանգության տեղնիկա: Խեցեղենի թծման ջերմաստիճանները: **Թեմա 9** Ջարդանախշի կիրառումը խեցեգործության մեջ;(Ջարդանախշի տեսակները և կառուցման սկզբունքները:Ջարդանախշի իմացաբանություն:)**Թեմա 10** Հայկական դեկորատիվ զարդանախշի ուսումնասիրություն: **Թեմա 11** Բուսական, կենդանական, երկրաչափական զարդանախշի առկայությամբ խեցեղեն նմուշների էսքիզների նախագծում և դիտարկում: **Թեմա 12** Նմուշի պատրաստում ձեռքով: **Թեմա 13** Առաջադրանքի վերջնական մշակում, չորացում և թծում : **Թեմա 14** Գունագարդում ջրաներկով և վերջնական թծում:

Ա/բ0419 Ջարդանախշերի տեսակները և իրականացման սկզբունքները 4

կրեդիտ, դասախոսություն -12, գործնական -42 (շաբաթական 3 ժամ)

**8-րդ կիսամյակ, ստուգաբք
Նպատակը.**

Ջարդանախշերի տեսակները և իրականացման սկզբունքները առարկայի խնդիրն է ուսուցման ընթացքում օգնել ուսանողներին ուսումնասիրելու դեկորատիվ-կիրառական արվեստի հորինվածքի հիմունքները՝ ձեռք բերելով դեկորատիվ պատկորման հիմնական գիտելիքները և հմտությունները, ինչպես նաև այդ գիտելիքները կիրառել պրակտիկայում: Նախատեսված ուսումնական գործընթացը խնդիր է դնում ուսանողի առջև ձեռնամուխ լինելու գեղարվեստական նոր միջոցների որոնմանը, որոնք կնպաստեն նրա ստեղծագործական երևակայության արդյունավետ զարգացմանը և գեղարվեստական ճաշակի ու մտածողության ձևավորմանը: Առարկայի հիմնական մեթոդն է գրաֆիկական պատկերումը, որի միջոցով ձևավորվում է ուսանողի այն ունակությունը, ինչպիսին է գեղարվեստական մտահղացումը, ստեղծագործական և կատարողական հմտությունները, որոնք մեծ դեր են խաղում գեղարվեստական կերպարի ստեղծման ընթացքում: Առարկայի նպատակն է ուսանողին ծանոթացնել զարդանախշի պատկերման հիմնական դրույթներին: Այն կնպաստի, որպեսզի ուսանողը ձեռք բերի մասանգիտական փորձ, գործնական առաջադրանքների կատարման համար ինքնուրույն հմտություններ, հասարակության զարգացման ժամանակակից էսթետիկական միտումների մեջ ազատ կողմնորոշվելու ունակություն և ստեղծագործական հնարավորությունները իրականացնելու կարողություն:

Կրթական արդյունքներ.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է.

- Իմանա զարդանախշի կառուցման հիմնական օրենքները:

- Իմանա զարդանախշի կան զարդամոտիվների ձևը և թվանդակությունը տարբեր ժամանակաշրջանների ոճերի և ժողովուրդների մոտ
- Կարողանա կիրառել ստացած տեսական գիտելիքները գործնականում
- Կարողանա ստեղծել գրագետ կառուցված, արտահայտիչ և հավասարակշռված զարդանախշ
- Տիրապետք գույնի հետ աշխատելու ունակությամբ, մաքուր և հավասար տոնով լցնել հարթության մակերեսը՝ պահպանելով գուներանգների մեղմ անցումը:

Բովանդակությունը.

Թեմա 1 Ձարդանախշի կան զարդամոտիվների ձևը և թվանդակությունը տարբեր ժամանակաշրջանների ոճերի և ժողովուրդների մոտ **Թեմա 2** Հայ ձեռագրային զարդանկարչությունը **Թեմա 3** Հայ զարդարվեստի հիմնական մոտիվները **Թեմա 4** Հայկական մանրանկարչություն: Հայկական մանրանկարչության դպրոցները **Թեմա 5** Ձարդանախշի կան զարդամոտիվների ձևը և թվանդակությունը տարբեր ժամանակաշրջանների ոճերի և ժողովուրդների մոտ **Թեմա 6** Ձարդանախշի կառուցման հիմնական օրենքները **Թեմա 7** Ձարդանախշի հարթության կազմակերպման սկզբունքները: Դեկորի և զարդանախշի պատկերման տեսակները **Թեմա 8** Հարթության բաժանումը մասերի, ձևերի հարաբերակցություն /մասշտաբ, համաչափություն/ **Թեմա 9** Հայկական զարդանախշի ընդօրինակում երկրաչափական, բուսական և կենդանական մոտիվներով **Թեմա 10** Ստեղծագործական զարդանախշ՝ հենվելով ազգային մշակույթի տարրերի վրա **Թեմա 11** Ուսումնասիրել այլ էթնիկ ժողովուրդների զարդարվեստի մշակույթը և կատարել 2-3 զարդանախշի ընդօրինակում

Ա/բ-1151 Սկուտեղների գեղարվեստական ձևավորում 4 կրեդիտ.

դասախոսություն -12,գործնական -42 (շաբաթական 3ժամ)

8-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի հիմնական նպատակն է ծանոթացնել սկուտեղների գեղարվեստական ձևավորմանը, զարգացման պատմությանը:

Վերլուծել և գնահատել սկուտեղների տեսական և գեղարվեստական հիմունքներ: Բացատրել տեխնոլոգիաների տարբերությունը, առանձնահատկությունը, չափագրել և նախագծել պատրաստվող ապագա իրը: Պահպանել անվտանգության կանոնները, խնամք տանել գործիքների համար: Զուգակցել ժողովրդական կիրառական արվեստի ավանդույթները ժամանակակից տեխնոլոգիաների հետ:

Առարկան զարգացնում է ուսանողների նախագծային մտքի ճկունությունը, գեղագիտական ճաշակը:

Կրթական արդյունքներ.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է.

Իմանա հայ ազգային և ժամանակակից սկուտեղների նմանություններն ու տարբերությունները

Բովանդակությունը.

Թեմա 1 „Սկուտեղների գեղարվեստական ձևավորում ... առարկայի դերն ու նշանակությունը համաշխարհային արվեստում : ***Թեմա 2*** Օանոթացում սկուտեղների լավագույն նմուշների հետ : ***Թեմա 3*** Հայ ազգային և ժամանակակից սկուտեղների նմանություններն ու տարբերությունները: ***Թեմա 4*** Պլաստիկ մասսայի նախապատրաստում, սկուտեղի պատրաստում ձեռքով, կաղապարի վրա կամ լցման եղանակով ***Թեմա 5*** Էսքիզների նախագծում, օգտագործելով հայկական մանրանկարչության զարդանախշեր և այլ զարդամոտիվներ: ***Թեմա 6*** Սկուտեղի մշակում և նկարազարդում ***Թեմա 7*** Նմուշի չորացում և թրծում :

Ա/բ-1152 Ժողովրդական գեղարվեստական կիրառական արվեստ 4 կրեդիտ,

դասախոսություն -28,գործնական -28(շաբաթական 2 ժամ)

6-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Ուսուցումը իրականացվում է դասախոսությունների և ստեղծագործական դեկորատիվ հորինվածքների ձևավորման նախանկարներ կատարելու ընթացքում:Սովորողները ծանոթանում են ավանդական ժողովրդական դեկորատիվ – կիրառական արվեստի ստեղծագործություններին: Գործնական առաջադրանքները կատարվում են դեկորատիվ առարկայի համապատասխան նյութերով /փայտ, մետաղ, կավ, թելեր/ նաև բնական նյութերի՝ տերևների, ծաղիկների, թիթեռների, հերբարիումի, դրանց ձևերի և գույների դեկորատիվ ոճավորման հիման վրա: Սովորողները ստեղծագործում են՝ կիրառելով ազգային, ժողովրդական զարդանախշի պարզագույն ձևերը: Աշխատանքների ընթացքում բացահայտվում է ժողովրդական արվեստի նշանակությունը որպես գեղագիտական, աշխատանքային և հայրենասիրական դաստիարակության հզոր միջոց: Ժողովրդական վարպետների պարզ և գեղեցիկ գեղարվեստական աշխատանքների ուսումնասիրությունը օգնում է աճող սերնդի մեջ սեր սերմանել դեպի հայրենի երկիրը, սովորեցնել տեսնել և սիրել բնությունը, գնահատել հայ և այլ ժողովուրդների ավանդույթները, հարգել նախորդների կատարած աշխատանքը:

Ծանոթանում են հայկական ժողովրդական տարազի զարգացման պատմական փուլերի հետ, հայկական գորգագործությանը,կարպետագործությանը:.....

Կրթական արդյունքներ.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է.

- Իմանա ժողովրդական կիրառական արվեստի զարգացման պատմությունը, ծանոթանա հանրահայտ նմուշների հետ
- Իմանա հայկական տարազի զարգացման պատմությունը:
- կարողանա իրականացնել դեկորատիվ – կիրառական արվեստի և ժողովրդական գեղարվեստական արհեստների ստեղծագործությունների պատրաստման համար նախապատրաստական նյութի նպատակային ընտրություն և վերլուծություն, գեղարվեստական և կերպարվեստային միջոցների ընտրության ստեղծագործական խնդրի հորինվածքի վրա հետևողական աշխատանքին համապատասխան:
- կարողանա կիրառել գիտելիքներն ու հմտությունները ազգային նմուշների կրկնօրինակման, դրանց տարբերակային կատարման դեկորատիվ – կիրառական արվեստի և ժողովրդական գեղարվեստական արհեստների ստեղծագործությունների՝ ըստ սեփական հորինվածքի կատարման գործընթացում
- տիրապետի ժողովրդական գեղարվեստական արվեստի ավանդույթներին որպես դեկորատիվ – կիրառական արվեստի կետրոնների հետ կապված գեղարվեստական ստեղծագործությունների ստեղծման սկզբունքներին ու մեթոդներին

Բովանդակությունը.

Թեմա 1 „Ժողովրդական գեղարվեստական կիրառական արվեստ .. առարկայի դերն ու նշանակությունը Թեմա 2 Հայկական կարպետը վաղ շրջանից մինչև մեր օրերը: **Թեմա 3** Հայկական ասեղնագործության ավանդույթը, տեխնիկաները և դպրոցները:**Թեմա 4**Գույն և գունատեսություն: Գունային ներդաշնակության կառուցման սկզբունքները և դասավանդման ձևատեսությունը ժող. գեղ. արհեստների դասավանդման ընթացքում /կարպետ, գոբելեն. հագուստի մոդելավորում**Թեմա 5**Դեկորատիվ – կիրառական արվեստի ձևերն ու տեսակները

Թեմա 6 Հայկական զարդանախշի օգտագործումը որպես հորինվածքային տարր: **Թեմա 7** Ձևավորել թեմատիկ և ստեղծագործական էսքիզների կատարման հմտություններ: Ձարդանախշերի իմաստաբանությունը: **Թեմա 8** Ձարդանախշի ինքնուրույն ստեղծումը՝ լուսական, երկրաչափական, կենդանական մոտիվներով: Հայկական դեկորատիվ զարդանախշի ընդօրինակում **Թեմա 9** Հայկական տարազի զարգացման պատմությունը: **Թեմա 10** Կատարել հայկական տարազի էսքիզներ:

Ա/բ- 1153 Ժամանակակից կերպարվեստի ուղղությունները 4 կրեդիտ.

դասախոսություն -28,գործնական -28(շաբաթական 4 ժամ)

6-րդ կիսամյակ, քննություն Նպատակը.

„Ժամանակակից կերպարվեստի ուղղությունները,, առարկան ոսումնասիրում է XX-րդ դարում ձևավորված ազդեցիկ մոդեռնիստական հոսանքների պատմական ձևավորման նախադրյալները՝ նրանց մնորոշ գծերը, առանձնահատկությունները, նորարական միտումները, կարևորագույն ներկայացուցիչների արվեստը և այլն: Առարկայի նպատակն է ներկայացնել գեղարվեստական հոսանքների արվեստը որպես կարևոր ջրմածան XX-րդ դարի գեղարվեստական մտքի զարգացման մարդ գործում, ինչպես նաև ցույց տալ կերպարվեստի նախորդ գաղափարամիտումներից մոդեռնի գլոբալ թաժամման պատճառները:

Կրթական արդյունքներ.

- Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է.
- Իմանա XX-րդ դարի մոդեռնիստական ազդեցիկ հոսանքների առավել վառ ներկայացուցիչների արվեստը (Վ. Կանդինսկի, Պ. Պիկասսո, Կ. Մալևիչ, Ս. Դալի), որոնք մեծ դեր են խաղացել XX-րդ դարի մշակույթի ձևավորման գործում:
- Իմանա Մոդեռնիստական հոսանքների առաջադրած գեղարվեստական նորարական սկզբունքները, նրանց զարգացման ուղիները:
- Իմանա XX-րդ դարի եվրոպական կերպարվեստի ձևավորման կարևորագույն նախադրյալները:
- Կարողանա զանազանել բազմաթիվ ուղղությունների գեղարվեստական գլխավոր առանձնահատկությունները, բնորոշիչ գծերը:
- Կարողանա հստակ պատկերացում կազմել յուրաքանչյուր գեղարվեստական հոսանքի որդեգրած աշխարհայացքի և նրա գեղարվեստական մեթոդի մասին:

Բովանդակությունը.

Թեմա 1 Մոդեռնիզմի գաղափարախոսությունը: **Թեմա 2** Ֆովիզմը (1905-1907) որպես XX-րդ դարի սկզբի առաջին գեղարվեստական հոսանք: Ա. Մատիս: **Թեմա 3** Կուբիզմ գաղափարախոսությունը և վարպետները **Թեմա 4** Ֆուտուրիզմ (1909): Ֆ. Ս. Մարինետտի **Թեմա 5** Մետաֆիզիկական նկարչություն: Ջ. դե Կիրիկո **Թեմա 6** Դեռ Բլաուե Ռայթեռ (Կապույտ հեծյալ, 1911): Վ. Կանդինսկի: **Թեմա 7** Մուպրեմատիզմ (1915): Կ. Մալևիչ: Սև քառակուսի: Մուպրեմատիզմը որպես արվեստի զարգացման մարձր աստիճան: **Թեմա 8** Դադա (1916): Տ. Տգարա: **Թեմա 9** Մյուրոեալիզմ: Գաղափարախոսությունը և վարպետները: **Թեմա 10** Պուանտելիզմ. Ժորժ Սյորա **Թեմա 11** Ֆուտուրիզմ :Գաղափարախոսությունը և վարպետները **Թեմա 12** Վաղ մոդեռնիստական տեներեցները ԱՄՆ-ում, Ռոմերո չենրի:

1.4. Հատուկ մասնագիտական առարկաներ

Ա/բ-0389 Կերպարվեստի ուս. մեթ. և տեխնոլոգիաներ- 4 կրեդիտ
Ղասախոսություն -28ժամ, գործնական 28 ժամ, (շաբաթական 4
ժամ) 6-րդ կիսամյակ, քննություն
Նպատակը.

Որպես ապագա նկարիչ-մանկավարժների՝ կերպարվեստի դասավանդման ձևատեսության ուսուցումը կերպարվեստի բաժնի ուսանողներին առանձնակի կարևորություն է ներկայացնում: Առանց մշակութային հարուստ ավանդույթներ ունեցող մեր ժողովրդի մշակութային արժեքների իմացության, առանց դրանց ստեղծման պատմությանը ծանոթ լինելու և սերնդից սերունդ դրանց ստեղծման ու ուսուցման ավանդական ու դասական ձերին ու մեթոդներին տեղյակ լինելու և դրանք յուրացնելու, ամենաբարձր կարգի նկարիչ-արվեստագետն անգամ, մեծ դժվարությունների կարող է հանդիպել կերպարվեստի ուսուցման հարցերում: Սույն ծրագրային թեմաների բովանդակության խոր ու կայուն

:

իմացության դեպքում կերպարվեստի ուսուցման բարդ ու դժվարին գործընթացը ավելի դյուրին կդառնա:

Առաջադրվող թեմատիկան հիմնովին և ամփոփ տեղեկություններ և իմացություններ կտա ուսանողին հետագայում դասապրոցեսը առավել ուշագրավ և առավել գիտականորեն կազմակերպելու, որի արդյունքում կերպարվեստի դասերը առավել արդյունավետ կանցկացվեն:

Կրթական արդյունքները.

- Տեսական գիտելիքներ կհաղորդի կերպարվեստի դասավանդման հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը մեզ հայտնի առավել արդյունավետ դասավանդման մեթոդների մասին,
- կերպարվեստի ուսուցման արդյունավետ ձևերին ու մեթոդներին,
- Հանրակրթական դպրոցում, ստեղծագործաբար մոտենալ դասավանդման հարցերին՝ կիրառելով ավանդական և ժամանակակից մեթոդները:

Բովանդակությունը.

Թեմա 1. Արտադպրոցական և արտադասարանական աշխատանքների կազմակերպման մեթոդիկան: **Թեմա 2.** Ուսուցչի դերը ուսումնադաստիարակչական գործընթացում: **Թեմա 3.** Կերպարվեստ առարկալի բովանդակությունը և ուսումնական պարապմունքների տեսակները. -Ուսուցման արդյունքների ստուգման և գնահատման չափանիշները: **Թեմա 4.** Նկարչության դասավանդման մեթոդիկան Հին Եգիպտոսում: **Թեմա 5.** Նկարչության դասավանդման մեթոդիկան Հին Հունաստանում: **Թեմա 6.** Միջնադար: **Թեմա 7.** Վերածնունդ: **Թեմա 8.** Գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության ակադեմիական համակարգը 16-17-րդ դարերում: **Թեմա 9.** Արևմտաեվրոպական մեծ լուսավորիչները կերպարվեստի ուսուցման հարցերի մասին. Կոմենսկի, Լոկ, Ռուսո, Պեստալոցցի:

Հ/Բ -0333 Տարիքային և մանկավարժական հոգեբանություն – 2 կրեդիտ

Դասախոսություն - 16 ժամ, գործնական - 16 ժամ

3-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացը գիտելիքներ է տալիս հոգեկանի զարգացման օրինաչափությունների, անձի տարիքային առանձնահատկությունների, անատոմո-ֆիզիոլոգիական կառուցվածքի, հոգեկանի զարգացման նախադրյալների, մեծահասակների և հասակակիցների հետ հարաբերությունների վերաբերյալ, հոգեկանի զարգացման օրինաչափությունների, փաստերի և մեխանիզմների մասին, ուսուցման և դաստիարակության ազդեցությամբ հոգեկանի զարգացման, աշակերտի անձի զարգացման առանձնահատկությունների, մանկավարժի մասնագիտության կառուցվածքի վերաբերյալ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

-կկարողանա ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում,

-կկարողանա որոշ գիտական հարցերի վերաբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ,

-կիմանա տարքային բոլոր փուլերում հոգեկանի զարգացման օրինաչափությունները, մեխանիզմներն ու առանձնահատկությունները

-կառանձնացնի տարքային ճգնաժամերը , հոգեկան նորագոյացությունները և գործունեության ձևերը,

-կկարողանա վերլուծության ենթարկել կրթական գործընթացների վերաբերյալ տեսություններն ու դրույթները,

-կիմանա կրթական գործընթացների արդի հիմնախնդիրները կրտսեր դպրոցական, դեռահասության, պատանեկության, ուսանողական տարիքներում:

-կհասկանա կառուցվածքային մոտեցումները, մեթոդաբանության տրամաբանությունը:

Բովանդակություն

Թեմա 1. Տարիքային և մանկավարժական հոգեբանության առարկան, խնդիրները, մեթոդները:

Թեմա 2. Տարիքային և մանկավարժական հոգեբանության՝ որպես գիտության ծագումն ու զարգացումը:

Թեմա 3. Հոգեկանի զարգացման տեսությունները:

Թեմա 4. Հոգեկանի զարգացման օրինաչափություններն ու դինամիկան և անձի ձևավորումն օնոդգենեզում:

Թեմա 5. Երեխայի հոգեկան զարգացումը մինչև դպրոց հաճախելը: Պերինատալ հոգեբանություն: Հոգեկան զարգացումը նորածնության շրջանում:

Թեմա 6. Երեխայի հոգեկան զարգացումը մանկկային տարիքում:

Թեմա 7. Վաղ մանկական տարիքի հոգեկան զարգացման առանձնահատկությունները:

Թեմա 8. Հոգեկան զարգացումը նախադպրոցական տարիքում

Թեմա 9. Անձի ձևավորումը և հոգեկան զարգացումը կրտսեր դպրոցական տարիքում:

Թեմա 10. Անձի ձևավորման և զարգացման հոգեբանական առանձնահատկությունները դեռահասության տարիքում:

Թեմա 11. Անձի ձևավորման և զարգացման հոգեբանական առանձնահատկությունները պատանեկության տարիքում:

Մ/բ-1110. Մանկավարժության պատմություն – 2 կրեդիտ

Դասախոսություն –16 ժամ, սեմինար –16 ժամ, (շաբաթական - 2ժամ)

4-րդ կիսամյակ, ստուգաթղթ

Նպատակը.

- Ուսանողներին զինել դաստիարակության, դպրոցի և մանկավարժական մտքի առաձայցման և զարգացմանը վերաբերող կարևորագույն գիտելիքներով
- Խորացնել մանկավարժական գիտելիքները, որպեսզի ուսանողը կարողանա վերլուծել, համեմատել և համապատասխան եզրահանգումներ կատարել անցյալի մանկավարժների ուսմունքների վերաբերյալ

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կկարողանա բնութագրել նշանավոր մանկավարժների մանկավարժական հայացքները և գործունեությունը,
- հնարավորություն կունենա ընդլայնելու իր մանկավարժական մտահորիզոնը,
- կձևավորի նշանավոր մանկավարժական տեսությունների և գաղափարների նկատմամբ հետաքրքրություն,
- քննադատական և համեմատական վերլուծության կենթարկի տարբեր ժամանակաշրջանների մանկավարժական գաղափարները,

Բովանդակությունը.

Թեմա 1. Դաստիարակության ծագումը նախնադարյան համայնական հասարակությունում: Դաստիարակման կազմակերպված ձևերի զարգացումն ու ձևավորումը հնագույն

քաղաքակրթության պայմաններում: **Թեմա 2.** Կրթությունը և մանկավարժական միտքը հին աշխարհում: **Թեմա 3.** Կրթությունը, մանկավարժական միտքը միջին դարերում և վերածնության շրջան: **Թեմա 4.** Դաստիարակությունը և մանկավարժական միտքը ֆեոդալական հասարակության դարաշրջանում: **Թեմա 5** Դաստիարակությունը և մանկավարժական միտքը 18-րդ դարում: **Թեմա 6.** Դաստիարակությունը և մանկավարժական միտքը 18-րդ դարի վերջին: **Թեմա 7.** Պետրոս 1-ին, Լոմոնոսով: **Թեմա 8.** Դպրոցը և մանկավարժական միտքը Ռուսաստանում /19-րդ դար/, ռուս հեղափոխական դեմոկրատ-մանկավարժներ: **Թեմա 9.** Դպրոցը և մանկավարժական միտքը 20-րդ դարասկիզբ: **Թեմա 10.** Ուշինսկի, Տոլստոյ, Պիրոգով: Նրանց մանկավարժական հայացքները: **Թեմա 11.** Մակարենկո, նրա մանկավարժական գործունեությունը: **Թեմա 12.** Դպրոցը և մանկավարժական միտքը ԽՍՀՄ-ում: **Թեմա 13.** Դպրոցն ու դաստիարակությունը մինչև Մետոյան հայագիր դպրոցը: **Թեմա 14.** Դպրոցն ու դաստիարակությունը 5-10-րդ դարերում: **Թեմա 15.** Դպրոցի և մանկավարժական մտքի զարգացումը հայկական վերածննդի ժամանակաշրջանում: **Թեմա 16.** Դպրոցն ու մանկավարժական միտքը 12-15-րդ դարերում: **Թեմա 17.** Դպրոցն ու մանկավարժական միտքը 16-18-րդ դարերում: **Թեմա 18.** Դպրոցն ու մանկավարժական միտքը 19-րդ դ.: **Թեմա 19.** Հայկական դպրոցը սփյուռքում: Ազգապահպան նշանակությունը: **Թեմա 20.** Դպրոցը և ժողկրթության համակարգը 1990-ական թվականներից առ այսօր ՀՀ-ում:

Կամընտրական դասընթաց հոգեբանությունից

Հ/բ-0303 Սոցիալական հոգեբանություն - 2 կրեդիտ

Դասախոսություն - 16 ժամ, սեմինար – 16 ժամ, (շաբաթական 2 ժամ)

4-րդ կիսամյակ, ստուգաթղթ

Նպատակը.

1. ուսանողներին զինել սոցիալ - հոգեբանական գիտելիքներով՝ ապահովելով նրանց հոգեբանական պատրաստվածությունն ու պիտանելիությունը իրենց ընտրած մասնագիտության մեջ, ընդլայնել ուսանողների տեսական, կիրառական, մեթոդական գիտելիքները,
2. գիտելիքներ հաղորդել անձի սոցիալականացման փուլերի, ինստիտուտների, մեխանիզմների վերաբերյալ,
3. բացատրել լիդերության և մաքիավելիզմի էությունը, նրանց տարբերությունները,
4. սովորեցնել անցկացնել հոգեբանամանկավարժական հետազոտություն՝ կիրառելով սոցիամետրիայի և ռեֆերենտմետրիայի մեթոդները,

5. ձեռք բերած գիտելիքներն ու ունակությունները կիրառել պրակտիկ աշխատանքային գործունեության մեջ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- ✓ ցուցաբերել իմանա անձի սոցիալականացման փուլերի, ինստիտուտների ու մեխանիզմների, ընտանեկան հարաբերությունների սոցիալ – հոգեբանական ասպեկտների իմացություն,
- ✓ ցուցաբերել լիդերության և մաքիավելիզմի էության իմացություն,
- ✓ ցուցաբերել մանկավարժական կոլեկտիվում ուսուցիչ – ուսուցիչ, աշակերտ - աշակերտ, ուսուցիչ - աշակերտ միջանձնային հարաբերությունների առանձնահատկությունների իմացություն:

Բովանդակություն

Թեմա 1. Սոցիալական հոգեբանության առարկան և խնդիրներն ու մեթոդները: **Թեմա 2.** Անձի սոցիալ-հոգեբանական բնութագիրը: **Թեմա 3.** Ընտանեկան հարաբերությունների սոցիալական հոգեբանությունը: **Թեմա 4.** Հաղորդակցումը որպես սոցիալ- հոգեբանական երևույթ: **Թեմա 5.** Սոցիալականաց ման փուլերը, ինստիտուտներն ու մեխանիզմները: **Թեմա 6.** Լիդերություն և մաքիավելիզմ: **Թեմա 7.** Աշակերտ-աշակերտ միջանձնային հարաբերությունները: **Թեմա 8.** Ուսուցիչ-աշակերտ միջանձնային հարաբերությունները: **Թեմա 9.** Մանկավարժական կոլեկտիվում միջանձնային հարաբերությունների սոցիալական հոգեբանությունը: **Թեմա 10.** Կոնֆլիկտները մանկավարժական կոլեկտիվում: **Թեմա 11.** Ամբոխի հոգեբանություն: **Թեմա 12.** Ազգի հոգեբանություն:

Յ/բ-0329 Ընտանիքի հոգեբանություն – 2 կրեդիտ

Դասախոսություն –16 ժամ, սեմինար - 16 ժամ, (շաբաթական 3 ժամ)

4-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Ուսանողներին զինել գիտելիքներով, որոնց օգնությամբ նրանք կկարողանան ընտանիքի հոգեբանության հիմնահարցերին և առաջացած խնդիրներին տալ մասնագիտական ,հոգեբանական լուծումներ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կկարողանա ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում,
- կտիրապետի ընտանեկան հոգեբանության հետազոտության մեթոդներին,
- կկարողանա որոշ գիտական հարցերի վերաբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ:

Բովանդակությունը

Թեմա 1. Ընտանիքի հոգեբանության առարկան ,խնդիրները ,սկզբունքները , մեթոդները :

Թեմա 2. Ընտանիքի հիմնական ֆունկցիաները:***Թեմա 3*** Սեր և խանդ : Խանդի

բաղադրիչները : ***Թեմա 4.*** Ապագա ամուսնու ընտրությունը : Հոգեբանական

համատեղելիություն : ***Թեմա 5.*** Մինչամուսնական սեռական կյանք: Արտամուսնական

կապեր: ***Թեմա 6.*** Ներընտանեկան կոնֆլիկտներ.պատճառները,տեսակները:

Ներընտանեկան կոնֆլիկտ և փակուղի : Փակուղուց դուրս գալու միջոցները: ***Թեմա 7.***

Ամուսնալուծության պատճառները և հետևանքները : ***Թեմա 8*** Երեխան,որպես ընտանիքի

լիարժեք անդամ :

Կամընտրական դասընթաց մանկավարժությունից

Մ/բ-0264 Էթնիկական մանկավարժություն (2 կրեդիտ)

16 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար (Շաբաթական 2 ժամ),

5-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը

Հավաքել և համակարգել երիտասարդ սերնդի կրթության և դաստիարակության մասին այն բոլոր տվյալները, որոնք կան ազգային մշակույթներում:

1) Բացահայտել, թե ժողովրդի մանկավարժական մշակույթն ինչպես է նպաստում սերունդների միջև կապերի ստեղծմանն ու ժամանակի ճիշտ ըմբռնմանը. նախնիներ -մենք ապագա սերունդներ շղթայի լիտակցմանը:

2) Ժամանակակից լիտական մանկավարժության և հոգեբանության ձեռքբերումների

միջոցով բացայտել էթնոսի հոգեկան և մշակույթի առանձնահատկությունների փոխկապվածությունը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ուսուցման արդյունքում ուսանողը պետք է իմանա.

1. էքոնոմանկավարժության առանձնահատկությունները, խնդիրները, կառուցվածքը
2. էքոնոմանկավարժության հիմնական հասկացությունները
3. էքոնոմանկավարժության տեղը և դերը մարդաբանական գիտությունների համակարգում
4. ժողովրդի բազմադարյան փորձի, բարոյական արժեքների սերնդե սերունդ փոխանցման կարևորությունը
5. ժողովրդական մանկավարժության մեջ օգտագործվող ավանդական մեթոդների և միջոցների վերածնման կարևորությունը:

Դասընթացի ուսուցման արդյունքում ուսանողը պետք է կարողանա.

1. մանկավարժական տարբեր իրավիճակներում կիրառել յուրացված տեսական գիտելիքները
2. ձևակերպել սեփական տեսակետը ժողովրդական մանկավարժության հիմնախնդրի վերաբերյալ
3. արտահայտել և հիմնավորել սեփական տեսակետը ժողովրդի մշակութային անցյալի արժեվորման մասին:

Դասընթացի ուսուցման արդյունքում ուսանողը պետք է տիրապետի.

1. էքոնոմանկավարժական գիտելիքների անհրաժեշտ մակարդակին
2. էքոնոմանկավարժության հիմնական հասկացությունների համակարգին
3. ժողովրդական մանկավարժության ժամանակակից միջոցներին:

ՎՐԻՄՅՈՒՆՆԵՐԸ

ԹԵՄԱ 1. ֆրիսկական մանկավարժության առարկան և խնդիրները **ԹԵՄԱ 2.** ֆրիսկական սոցիալականացում և մանկավարժություն **ԹԵՄԱ 3.** նույնիսկ արտացոլումը էքոնոմի մանկավարժական մշակույթում **ԹԵՄԱ 4.** Սախնադարյան էքոնոմանկավարժություն և էքոնոմի ծագման (էքոնոգենեզ) խնդիրները **ԹԵՄԱ 5.** Իրոնական պահանջմունք և ճակատագրապաշտություն **ԹԵՄԱ 6.** Քրիստոնեական հոգեբանություն և մանկավարժություն **ԹԵՄԱ 7.** ֆրիսկական սոցիալական իմացություն և մանկավարժություն **ԹԵՄԱ 8.** Փարդու բնավորության մասին պատկերացումները ժողմանկավարժության մեջ **ԹԵՄԱ 9.** Զոլովրդական պատկերացումները մարդու ընդունակությունների մասին **ԹԵՄԱ 10.** Փանելուկների էքոնոմանկավարժություն և էքոնոմագրանություն

Մ/բ-0247. Սոցիալական մանկավարժություն 2 կրեդիտ

16 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար (Շաբաթական 2 ժամ),

5-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթություն) ուսանողների կողմից սոցիալական մանկավարժության որպես ինտեգրատիվ գիտության տեսական դրույթների, սոցիալական դաստիարակության և սոցիալականացման վերաբերյալ տեսական ու գործնական գիտական գիտելիքների յուրացումը: Ուսանողների մոտ ձևավորել և զարգացնել ընդհանրական և բուն մասնագիտական կոմպետենցիաներ, որոնք անհրաժեշտ են ապագայում մասնագիտական հաջող գործունեության, ինչպես նաև ուսումնառության հաջորդ փուլերում կրթությունը շարունակելու համար:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

«Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթություն)» մասնագիտությամբ բակալավրիատն ավարտողն պետք է տիրապետի հետևյալ կոմպետենցիաներին.

1. ունենա փաստեր համադրելու և սինթեզելու ունակություն,
2. ունակ լինի քանակական տվյալներից որակական հետևություններ անելու և գիտելիքները ստեղծագործաբար կիրառելու,
3. ունենա նոր գաղափարներ առաջ քաշելու և զարգացնելու կարողություն,
4. ունակ լինի ինքնուրույն և թիմում աշխատելու, ինչպես նաև թիմային աշխատանքը կազմակերպելու և առաջնորդելու,
5. կարողանա իրականացնել արդյունավետ կրթական գործունեություն՝ դասավանդման ժամանակակից մեթոդների կիրառմամբ:
6. կարողանա լուծել սոցիալ-մանկավարժական և սոցիալ-հոգեբանական խնդիրներ:

1. Գիտենա՝

- ՀՀ Սահմանադրությունը և կրթության բնագավառի օրենքները, ժամանակակից կրթության հարացույցները:

- Մարդու և հասարակության, մարդու և շրջակա միջավայրի հարաբերությունները կարգավորող վարվելաձևի էթիկական և իրավական նորմերը:
- Սոցիալ-մանկավարժական աշխատանքի առանձնահատկություններն ու մեթոդները գործունեության տարբեր ոլորտներում սոցիալական տարբեր ինստիտուտներում:
- Հասարակության մեջ ռիսկային խմբերի անդամներին ինտեգրելու և նրանց սոցիալական հարմարումն ապահովելու սոցիալ-մանկավարժական մեթոդները:

2. Կարողանա՝

- Կազմակերպել իր աշխատանքային գործունեությունը՝ հենվելով կրթության և գիտության օրենքի հիմնական դրույթների վրա:
- Տրամաբանորեն ճիշտ ձևակերպել գրավոր և բանավոր խոսքը, գիտականորեն կազմակերպել իր աշխատանքը:
- Մանկավարժության, սոցիալական մանկավարժության բնագավառում ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ՝ օգտագործելով ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները:
- Կազմակերպել սոցիալ-մանկավարժական հետազոտություններ:
- Ռիսկային խմբերի անդամներին ինտեգրել հասարակության մեջ և ապահովել նրանց ակտիվ սոցիալական հարմարումը:

3. Տիրապետի՝

- Ժամանակակից կրթադաստիարակչական աշխատանքի իրականացման, դրա արդյունքների գնահատման մեթոդներին:
- Ուսումնադաստիարակչական աշխատանքի ախտորոշման և գործընթացի արդյունքների կանխատեսման մեթոդներին:
- Սոցիալ-մանկավարժական վերականգնողական, շտկողական աշխատանքների մեթոդներին և տեխնոլոգիաներին:
- Հասարակության մեջ ռիսկային խմբերի անդամներին ինտեգրելու և նրանց սոցիալական հարմարումն ապահովելու սոցիալ-մանկավարժական մեթոդներին:
- Սոցիալական դաստիարակության կազմակերպում տարբեր տիպի դաստիարակչական կազմակերպություններում:
- Ռիսկի խմբի երեխաների հետ սոցիալ-մանկավարժական փոխներգործության իրականացում տարբեր սոցիալ-մանկավարժական իրադրություններում տարբեր սոցիալական ինստիտուտների հետ համատեղ:
- Հանրակրթական դպրոցում ուսուցման, դաստիարակության և զարգացման գործընթացների իրականացում

Բովանդակությունը.

Թեմա 1. Սոցիալական մանկավարժությունը որպես գիտաճյուղ:

Սոցիալական մանկավարժության խնդիրները:

Սոցիալական մանկավարժության օբյեկտը և առարկան:

Թեմա 2. Մարդու սոցիալականացման գործընթացը:

Սոցիալականացման պայմանական խնդիրները:

Մարդը սոցիալականացման գործընթացում որպես օբյեկտ և սուբյեկտ:

Մարդը սոցիալականացման գործընթացում որպես զոհ:

Թեմա 3. Մարդու սոցիալականացման տարիքային փուլերը:

Մարդու սոցիալականացման մեխանիզմները:

Թեմա 4. Սոցիալական մանկավարժության հետազոտության մեթոդները:

Թեմա 5. Սոցիալական մանկավարժության հիմնական հասկացությունները:

- «Սոցիալականացում» հասկացության էությունը:
- Սոցիալականացման գործընթացի բաղադրիչները:

Թեմա 6. Մարդու սոցիալականացման փուլերը:

- Սոցիալականացման գործոնները:
- Սոցիալականացման գործակալները:

Թեմա 7. Երեխան և նրա սոցիալականացման օրինաչափությունները:

Թեմա 8. Ընտանիքը որպես սոցիալական ինստիտուտ երեխայի զարգացման և դաստիարակության գործում:

Թեմա 9. Դժվար դաստիարակվող երեխաներ:

Թեմա 10. Դպրոցը որպես սոցիալականացման կարևոր ինստիտուտ:

Թեմա 11. Սոցիալական մանկավարժի աշխատանքի ուղղությունները դպրոցում.

- Սոցիալական մանկավարժի աշխատանքը ուսուցիչների հետ
- Սոցիալական մանկավարժի աշխատանքը ծնողների հետ
- Սոցիալական մանկավարժի աշխատանքը սովորողների հետ:

Թեմա 12. Սոցիալական մանկավարժի գործունեության գործառույթները դպրոցական համակարգում:

Թեմա 13. Սոցիալական մանկավարժի աշխատանքը «Ռիսկի խմբի» ընտանիքների հետ:

Թեմա 14. Օժտված երեխաների հետ սոցիալական մանկավարժի աշխատանքի մեթոդները:

V. Այլ բաղադրիչներ

1. Կուրսային աշխատանք (3+3=6 կրեդիտ), 5-րդ, 6-րդ կիսամյակներ

ա) 5-րդ կիսամյակում կուրսային աշխատանք է կատարվում «Հայ և համաշխարհային կերպարվեստի պատմություն» առարկայից՝ ուսանողի ընտրությամբ:

բ) 6-րդ կիսամյակում կուրսային աշխատանք է կատարվում «Կերպարվեստի ուսուցման մեթոդիկա և տեխնոլոգիա » առարկայից՝ ուսանողի ընտրությամբ:

Ուսումնական պրակտիկա - 3 կրեդիտ, 2-րդ, 4-րդ կիսամյակ, 90 ժամ, ստուգարք

Պրակտիկայի նպատակն է

ուսանողի մոտ գեղանկարի, գծանկարի, կոմպոզիցիայի բնագավառում զարգացնել տարածական զգացողությունը. եռաչափ տարածական պլանների պատկերացումը բացօթյա պայմաններում գծի, գույնի, և տոնի ներդաշնակման խնդիրները, լուսաստվերի համադրումը կոլորիտին՝ այդ ամենին տալով ստեղծագործական մոտեցում

Պլեների անցկացման համար նպատակահարմար է ընտրել բնորոշ տեղանքներ, այն է՝ պատմաճարտարապետական վայրեր, բնության առավել գեղեցիկ տեսարաններ: Պրակտիկան ամփոփվում է արված աշխատանքների քննարկումով և գնահատմամբ:

Թեմայի անվանումը		
2-րդ կիսամյակ		
1	Բնանկարի կարճատև էտյուդներ պարզ մոտիվ /գրիզայլ/ Ջրաներկ, գուլաշ	
2	Բնապատկերի իրավիճակը /կարճատև էտյուդներ/ Ջրաներկ, գուլաշ	
3	Բնության էլեմենտներ /ծառատեսակներ, թփուտներ/ Ջրաներկ, գուլաշ	
4	Կենդանական աշխարհ/թռչունների և կենդանիների կարճատև էտյուդ/	
5	Կոմպոզիցիոն-թեմատիկ աշխատանք Ֆլումաստեր, գրիչ, ջրաներկ, գուլաշ	
4-րդ կիսամյակ		
6	Իրավիճակը բնանկարում /կարճատև էտյուդներ/ Գուլաշ, յուղաներկ	
7	Պատմական և մշակութային հուշարձաններ/ Սբ. Աստվածածին, Սբ. Գր. Նարեկացի եկեղեցիներ/ Գուլաշ, յուղաներկ	
8	Մարդը բնության մեջ /ճեպանկարներ, էտյուդներ/ Ֆլումաստեր, գրիչ, ջրաներկ, գուլաշ, յուղաներկ	
9	Կոմպոզիցիոն թեմատիկ աշխատանքներ Ֆլումաստեր, գրիչ, ջրաներկ, գուլաշ, յուղաներկ	

2. Արտադրական (մանկավարժական) պրակտիկա (6 կրեդիտ), 7-րդ կիսամյակ 8
Նպատակը.

1. Կերպարվեստի ապագա ուսուցչին ծանոթացնել ՀՀ հանրակրթության բարեփոխումներին, դպրոցի կրթական և դաստիարակչական ողջ համակարգին, նրա կառուցվածքին,
2. բուհական տվյալ դասընթացի սահմաններում ուսանողների ձեռք բերած տեսական գիտելիքները գործնականում կիրառելու հմտությունների ձևավորում,
3. ուսանողների ինքնուրույն գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում,

4. գործնականում ուսանողների կողմից դասագրքերի, ծրագրերի և ուսումնաօժանդակ նյութերի ստեղծագործաբար օգտագործելու ունակության ապահովում:

Խնդիրները.

1. Ուսանողներին սովորեցնել ճիշտ կողմնորոշվել տվյալ դասընթացի ուսուցման մեթոդաբանության մեջ

2. զարգացնել ուսանողների ինքնուրույն մտածելու, ստեղծագործական ունակությունները

3. ուսանողներին հաղորդակից դարձնել ուսուցման ժամանակակից մեթոդներին, զարգացնել դրանք ավանդական մեթոդների հետ հմտորեն համակցելու ունակություն:

Չափորոշիչ.

Կերպարվեստի դասերի ունկնդրում: Ուսումնական ծրագրերի և թեմատիկ պլանի հետ ծանոթություն: Ինքնուրույն դասերի անցկացում տարբեր դասարաններում: Օրագրի կազմում: Դպրոցում հանդեսի, ցերեկույթի կազմակերպում: Ուսանող պրակտիկանտը պետք է ներկայացնի համապատասխան դասարանում իր կողմից պարապվող դասերի գրաֆիկը, յուրաքանչյուր դասի համար կազմի դասի ծրագիր – նկարագիրը՝ կարևորելով տվյալ դասի դաստիարակչական դերը, կարողանա լրացնել աշխատանքային մատյանը և օրագիրը:

Բովանդակությունը.

Առաջին շաբաթվա ընթացքում պրակտիկան ղեկավարող մեթոդիստ դասախոսի ուղեկցությամբ այցելություն դպրոց. ծանոթություն դպրոցի ուսումնական և դաստիարակչական ողջ գործընթացին, դպրոցի կառավարման համակարգին, ուսումնական և ղեկավարման առանձին օղակներին, դասղեկական, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքային պլաններին և ծրագրերին. ծանոթություն դասարաններին, աշակերտների տարիքային և հոգեբանական առանձնահատկություններին, նրանց անհատական ընդունակություններին և կարողություններին, աշակերտների նախասիրություններին: Կազմակերպել դասալսումներ, քննարկումներ ուսուցչի և մեթոդիստ դասախոսի մասնակցությամբ: Մեթոդիստ - դասախոսի և ուսուցչի հետ համատեղ կազմել պրակտիկայի ծրագիր պլան և յուրաքանչյուր շաբաթվա առաջին օրը հաստատել արձանագրությամբ: Ուսանող պրակտիկանտի կողմից յուրաքանչյուր դաս քննարկվում է, նշվում են դրական կողմերը, նկատված թերությունները: Քննարկմանը մասնակցում են մեթոդիստ - դասախոսը, ուսուցիչը, մանկավարժը և հոգեբանը: Ուսանող պրակտիկանտը պարտավոր է ունենալ դասերից դուրս արտադասարանային միջոցառումների անցկացման անհատական պլան - գրաֆիկ:

3. Ավարտական որակավորման քննություններ (5 + 3=8 կրեդիտ), 8-րդ կիսամյակ